


«Քրիստոսի հետ Քալելով». Ճիսկան Ուղեցոյց՝
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Պատրաստութիւն՝ «Քալել Քրիստոսի հետ»՝ 2026-ին,
եւ Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումար 2028-ին:

WALKING WITH CHRIST



ՊԱՏԳԱՄ ՄԸ ՌԻԶԸՐՏ ԱՄՊԸՐԶ ԵՊԻՍԿՈՊՈՍԷՆ

Ամեն տարի Սիտնիի զանազան կողմերեն Կաթողիկէ հաւատացեալներ կը համախմբուին մեր տարեկան Հաղորդութեան Թափօրին համար, «Քալել Քրիստոսի հետ», յայտարարելու եւ հրապարակաւ վկայելու մեր հաւատքը Յիսուս Քրիստոսի հանդէպ, որը ճշմարտապէս ներկայ է Ամենասուրբ Հաղորդութեան մէջ:

«Քալել Քրիստոսի հետ» միջոցառումի պատրաստութեան համար մենք պատրաստած ենք Ծխական Ուղեցոյց մը՝ որպէսզի շարունակուի այս Հաղորդութեան վերանորոգութիւնը զոր Սիտնիի Եկեղեցին այժմ կ'ապրի: Կը քաջալերեմ ձեզ օգտագործել այս Ուղեցոյցը աղօթելու, խոկալու, եւ ձեր ծխակիցներուն հետ կիսուելու անոր արտացոլացումներուն ոգեշնչած միտքերն ու զգացումները:

Մինչ միասին կ'ընթանանք դէպի 2028-ի Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումարը, «Քալել Քրիստոսի հետ» նախաձեռնութիւնը առանցքային դեր պիտի ունենայ Սիտնիի նախապատրաստութեան մէջ՝ այս խիստ նշանակալից առիթին համար: Թող մենք շարունակենք վերանորոգուիլ եւ սնանիլ Անոր Մարմինով եւ Արինով, եւ դառնալ Քրիստոսի սիրոյն վկաները աշխարհի առջեւ:

Ամենապատիւ Ռիչըրտ Ամպըրզ

Ընդհանուր Քարտուղար, Միջազգային Ս.
Հաղորդութեան Համագումար 2028

+ Richard Ambroz



Ինչու քաղել Քրիստոսի հետ:

Աւետարաններուն մէջ կը հանդիպինք մարդկանց որոնց կեանքերը այլափոխուեցան երբ անոնք հանդիպեցան Յիսուսին: Ոմանք Անոր հանդիպեցան լճի ափին, ուրիշներ, Անոր հանդիպեցան փոշոտ ճամբաներու վրայ, բազմամարդ տուններու մէջ, կամ տառապանքի եւ կարիքի պահերուն:

Այսօր մենք կը հանդիպինք նոյն Յիսուսին՝ Հաղորդութեան մէջ:

Եկեղեցին կը ստրվեցնէ, թէ Քրիստոս ճշմարտապէս, իրապէս եւ էապէս ներկայ է Սուրբ Խորհուրդին մէջ: ԱմէնՊատարագ հանդիպում մըն է կենդանի Տիրոջ հետ, որ Ինքզինք ամբողջովին կը պարզելէ աշխարհի կեանքին համար:

Սակայն, շատ Կաթողիկէ հաւատացեալներ կը փափաքին աւելի խորապէս հասկնալ Հաղորդութիւնը, եւ աւելի անձնական յարաբերութիւն հաստատել այս սիրոյ խորհուրդին մէջ ներկայ Յիսուսին հետ:

Այս ուղեցոյցը պատրաստուած է օգնելու այդ ցանկութիւնը բաւարարելու համար:

Առաջիկայ շաբաթներու ընթացքին պիտի ուսումնասիրենք Հաղորդութեան խորհուրդը՝ Սուրբ Գրքի, Եկեղեցւոյ վարդապետութեան, աղօթքի, անձնական խորհրդածութեան, եւ խմբային քննարկումներու միջոցով: Միասնաբար պիտի խորացնենք մեր հասկացողութիւնը՝ թէ ինչի կը հաւատայ Եկեղեցին, եւ պիտի բացայայտենք, թէ ինչպէս Ս. Հաղորդութիւնը կը կերտէ Քրիստոնէական կեանքի իւրաքանչիւր երեւոյթ:

Այս կազմաւորիչ ճամբորդութիւնը մեզ կ'առաջնորդէ դէպի «Քաղել Քրիստոսի հետ» 22 Նոյեմբեր 2026-ին, ուր հազարաւոր Կաթողիկէ հաւատացեալներ պիտի համախմբուին աղօթքի եւ վկայութեան համար: Անկէ անդին, այս ճամբորդութիւնը մաս կը կազմէ մեր նախապատրաստութեան՝ 2028-ի Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումարին, երբ Տիեզերական Եկեղեցին պիտի հրաւիրուի վերստին խորհրդածելու Հաղորդութեան պարզելի մասին:

Թող Համագումարին տանող այս առաջին քայլը նորոգէ ձեր հաւատքը, զօրացնէ ձեր յոյսը, եւ խորացնէ ձեր սէրը Յիսուս Քրիստոսի հանդէպ:

ԻՆՉՊԷՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՅՑԸ

Այս ուղեցույցը նախատեսված է ուղեկցելու մեր ճամբորդության դէպի «Քալել Քրիստոսի հետ» եւ, անկէ անդին՝ Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումար՝ 2028-ին:

Վեց բաժինները կրնան գործադրուիլ այնպիսի ժամանակացոյցով կամ ընթացքով, որ ամենէն աւելի կը յարմարի ձեր ժողովրդապետութեան, դպրոցին, ծառայութեան, ընտանիքին կամ համայնքին: Թէեւ **երկու շաբաթը անգամ մը հաւաքուիլը կը յանձնարարուի**, որպէսզի նիստերուն միջեւ աղօթքի, խորհրդածութեան եւ քննարկութեան համար բաւարար ժամանակ ըլլայ, առաջարկուած թուականները միայն ուղեցույցի բնոյթ ունին եւ կրնան յարմարցուիլ տեղական պայմաններուն համաձայն:

Իւրաքանչիւր բաժին նախատեսուած է շուրջ **60-90 վայրկեան** տևող հաւաքի մը համար, եւ կրնայ օգտագործուիլ անհատապէս, ընտանիքներու մէջ, ծխական խումբերու, ծառայական խմբակներու, դպրոցներու եւ այլ Կաթողիկէ համայնքներու շրջանակին մէջ:

Այս վեց բաժիններու միջոցով մասնակիցները կը հրաւիրուին խորացնելու Ս. Հաղորդութեան իրենց հասկացողութիւնը, աճելու Յիսուս Քրիստոսի հետ բարեկամութեան մէջ, եւ վերանորոգելու իրենց առաքելութիւնը որպէս Անոր աշակերտները: Միասնաբար, այս հանդիպումները կ'ուսումնասիրեն Քրիստոսի ներկայութիւնը Ս. Հաղորդութեան մէջ, Սուրբ Պատարագը որպէս զոհաբերութիւն եւ յիշատակութիւն, Եկեղեցւոյ հաղորդութիւնը, աղօթքի կեանքը եւ Հաղորդութեան Երկրպագութիւնը, ինչպէս նաեւ այն առաքելութեան եւ վկայութեան մասին, որոնք կը բխին Հաղորդութեան աշակերտութենէն:

Անկախ անկէ թէ այս Ուղեցույցը պիտի օգտագործուի ամհատապէս կամ խմբային կերպով, թող ան օգնէ մեզի պատրաստելու մեր սրտերը աւելի մօտէն ընթանալու Քրիստոսի հետ, որ ներկայ է Սուրբ Խորհուրդին մէջ, եւ ուրախ վկայութիւն տալու Անոր մասին մեր համայնքներուն մէջ:

Կրնաք նաեւ ուսումնասիրել յաւելեալ տեսանիւթեր, վկայութիւններ, յօդուածներ, աղօթքներ եւ ծխական աղբիւրներ՝ Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումար 2028-ի կայքէջին վրայ. **eucharist28.org**



ՄԵՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԵՊՈՒ «ՔԱԼԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ» Թափօր

**Ա ՆԻՐ. Քրիստոսի Ներկայութիւնը Ս.
Հաղորդութեան մէջ**

Բացայայտել Եկեղեցւոյ վարդապետութիւնը Քրիստոսի Իրական Ներկայութեան մասին, եւ խորացնել ձեր հաւատքը Քրիստոսի հանդէպ, որ ճշմարտապէս ներկայ է Սուրբ Խորհուրդին մէջ:

**Բ ՆԻՐ. Ս.Պատարագ որպէս Զոհաբերութիւն եւ
Յիշատակութիւն**

Ուսումնասիրել թէ ինչպէս Ս. Հաղորդութիւնը ներկայ կը դարձնէ Քրիստոսի փրկարար զոհաբերութիւնը, եւ մեզ կը միացնէ Իր Զատկական Խորհուրդին:

Գ ՆԻՐ. Ս. Հաղորդութիւնը Կը Կերտէ Եկեղեցին

Անդրադառնալ թէ ինչպէս Ս. Հաղորդութիւնը հաւատացեալները կը միաւորէ որպէս Քրիստոսի մարմին, եւ կը զօրացնէ Եկեղեցւոյ կեանքն ու առաքելութիւնը:

**Դ ՆԻՐ. Երկրպագութիւն եւ Աղօթք Սուրբ
Խորհուրդին առջեւ**

Սորվիլ թէ ինչպէս Քրիստոսի Ս. Հաղորդութեան ներկայութեան մէջ անցուցած ժամանակը կը խորացնէ աղօթքը, աշակերտութիւնը եւ Տիրոջ հետ բարեկամութիւնը:

Ե ՆԻՐ. Ս. Հաղորդութիւնը եւ Առաքելութիւնը

Բացայայտել թէ ինչպէս Քրիստոսը ընդունիլը մեզ կ'առաքէ ծառայելու ուրիշներուն, եւ Աւետարանը ապրելու առօրեայ կեանքի մէջ:

Զ ՆԻՐ. Քրիստոսի հետ Քալել

Պատրաստուիլ «Քալել Քրիստոսի հետ» թափօրին՝ խորհրդածելով Հաղորդութեան վկայութեան, հաւատքի հանրային արտայայտութիւններուն, եւ աշխարհին մէջ Քրիստոսը հռչակելու մեր կոչումին մասին:

Պատրաստութեան Վերջին Շաբաթը

Աղօթքի, հաշտութեան, Ս. Հաղորդութեան երկրպագութեան, եւ հոգեւոր պատրաստութեան շաբաթ մը, մինչ մենք զմեզ կը պատրաստենք մասնակցելու «Քալել Քրիստոսի հետ» թափօրին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ՝ «ՔԱԼԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ» ԹԱՓՕՐԻՆ

Մինչ «Քալել Քրիստոսի հետ» թափօրի օրը կը մօտենայ, ծուխերը կը քաջալերուին, այս ուղեցոյցի գործածութեան զուգահեռ, կատարել թէ գործնական եւ թէ հոգեւոր նախապատրաստութիւններ: Նախորդող շաբաթներուն եւ ամիսներուն ընթացքին կատարուած զգուշատր ծրագրաւորումը պիտի նպաստէ ապահովելու որ ծիսականները կարենան լիովին եւ վստահօրէն մասնակցիլ հաւատքի այս կարեւոր հանրային վկայութեան:



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

Գործնական Կարգադրություններ

- ☐ Գովազդել «Քալել Քրիստոսի Հետ» թափօրը Սուրբ Պատարագներու ընթացքին, ծխական հաղորդակցություններու եւ ընկերային ցանցերու միջոցով:
- ☐ Քաջալերել ընտանիքներ, ծառայություններ եւ ծխական խումբեր միասնաբար մասնակցելու:
- ☐ Կազմակերպել փոխադրամիջոցներ դէպի քաղաք եւ վերադարձի համար՝ նկատի ունենալով հանրային փոխադրութեան միջոցները:
- ☐ Պատրաստել եւ կազմակերպել ծխական դրօշներ ու պատատոներ թափօրին համար:
- ☐ Նշանակել ծխական պատասխանատուներ կամ կամաւորներ՝ մասնակցողներու համակարգումը ստանձնելու համար այդ օրը:
- ☐ Բաժնեկցիլ հանդիպման վայրերուն, ժամերուն եւ թափօրի մանրամասնություններուն վերաբերող հիմնական տեղեկությունները:

Եթէ ձեր ծուխը, հովուապետական սպասարկությունը կամ խումբը կարիք ունի աջակցութեան այս նախապատրաստություններուն կամ կազմակերպչական հարցերուն համար, կը խնդրենք կապուիլ հետեւեալ կայքէջի միջոցով. bishop.umbersoffice@sydneycatholic.org

Հոգեւոր Նախապատրաստություն

- ☐ Կազմակերպել Սուրբ Ժամ՝ Սուրբ Խորհուրդէն առաջ:
- ☐ Հաշտութեան Խորհուրդին համար տրամադրել յաւելեալ առիթներ:
- ☐ Քաջալերել հաւատացեալները ժամանակ տրամադրելու անձնական աղօթքի եւ Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան:
- ☐ Կազմակերպել ծխական վկայութեան երեկոյ մը՝ հրաւիրելով մասնակիցները պատմելու, թէ ինչպէս Տէրը այս թափօրին միջոցով գործած է իրենց կեանքերուն մէջ:
- ☐ Հաւատացեալներու Աղօթքին մէջ ներառել աղօթքներ «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին համար:
- ☐ Կիրակնօրեայ Սուրբ Պատարագի ընթացքին օրհնություն շնորհել բոլոր անոնց, որոնք պիտի մասնակցին:

Վկայություն եւ Առաքելություն

- ☐ Հրաւիրել ոչ գործօն Կաթողիկէներ, ընտանիքի անդամներ ու բարեկամներ մասնակցելու թափօրին:
- ☐ Քաջալերել ծխական ծառայություններ, դպրոցներ եւ երիտասարդական խումբեր միասին մասնակցելու:
- ☐ Տարածել լուսանկարներ, պատմություններ եւ վկայություններ, որոնք կը ներկայացնեն ժողովրդապետութեան Հաղորդութեան ճամբորդությունը:
- ☐ Աղօթել բոլոր անոնց համար, որոնք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրի միջոցաւ պիտի հանդիպին Եկեղեցւոյ վկայութեան:



ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ.
ՔՐԻՍՏՈՍԻ
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՌԻՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Բացման Աղօթք

Անուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն:

Տէր Յիսուս Քրիստոս,

Դուն կը մնաս Քու Եկեղեցիիդ հետ Սուրբ Խորհուրդին մէջ:
Բաց մեր մտքերը, որպէսզի հասկնանք Ս. Հաղորդութեան
պարգեւը,

եւ բաց մեր սրտերը, որպէսզի հաւատքով եւ սիրով
ընդունինք Քեզ:

Մինչ կը սկսինք այս ճամբորդութիւնը դէպի «Քալել
Քրիստոսի հետ» թափօրը

եւ 2028-ի Միջազգային Հաղորդութեան Համագումարը,
վերանորոգէ մեր մէջ ակնածանք մը Քու Սուրո
ներկայութեանդ հանդէպ:

Թող մենք ճանչնանք Քեզ հացի բեկանման մէջ,
պաշտենք Քեզ երախտապարտ սիրտերով,
եւ հաւատարիմ կերպով հետեւինք Քեզի՝ որպէս Քու
աշակերտներդ:

Այս կը խնդրենք մեր Տէր Քրիստոսի միջոցով:
Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում

Յովհաննէս 6.51-58

«Ես եմ այն կենդանի հացը, որ երկինքէն իջաւ: Ով որ այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի. եւ այն հացը, զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար, իմ մարմինս է»:

Այն ժամանակ Հրեաները իրարու հետ կը վիճէին՝ ըսելով. «Ինչպէ՞ս կրնայ այս մարդը իր մարմինը մեզի տալ ուտելու»:

Այն ժամանակ Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ Մարդու Որդին մարմինը չուտէք եւ անոր արինը չիւմէք, ձեր մէջ կեանք չունիք: Ով որ կ'ուտէ իմ մարմինս ուտէ եւ կը խմէ իմ արինս, յաւիտեանական կեանք կ'ունենայ, եւ ես անոր յարութիւն պիտի տամ վերջին օրը. որովհետեւ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արինս ճշմարիտ ըմպելիք: Ան որ իմ մարմինս կ'ուտէ եւ իմ արինս կը խմէ, անիկա իմ մէջս կը բնակի, եւ ես անոր մէջը: Ինչպէս կենդանի Հայրը զիս դրկեց, եւ ես կը կենդանի եմ Հօրս ձեռքով, այնպէս ալ ան որ զիս կ'ուտէ, ինք ալ ինձմով պիտի կենդանի մնայ: Այս է այն հացը, որ երկինքէն իջաւ. ոչ այնպէս, ինչպէս ձեր հայրերը կերան եւ մեռան. այլ ով որ այս հացէն ուտէ՝ յաւիտեան պիտի ապրի»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին վրայ:

Ուսուցման Բաժին

Քրիստոս Իսկապէս Ներկայ

Կաթողիկէ հաւատքի հիմնական հաւատքը այն է թէ Յիսուս Քրիստոս ճշմարտապէս ներկայ է Սուրբ Հաղորդութեան մէջ: Երբ քահանան Սուրբ Պատարագի ընթացքին արտասանէ սրբազործութեան խօսքերը, հացն ու գինին կը դառնան Քրիստոսի Մարմնն ու Արինը:

Այս հաւատքը պարզ խորհրդանշական չէ: Եկեղեցին կը սորվեցնէ, թէ Քրիստոս Սուրբ Հաղորդութեան մէջ ներկայ է «ճշմարտապէս, իրապէս եւ էականօրէն»: Թէեւ հացին ու գինին

արտաքին երեւոյթները կը մնան նոյնը, անոնց խորագոյն իրականութիւնը կը փոխակերպուի եւ կը դառնայ Անձամբ Քրիստոսը: Այս խորհուրդը անանդաբար կոչուած է «գոյափոխութիւն»:

Այս ուսուցման արմատները կը գտնուին Սուրբ Գրքին մէջ: Չորս Աւետարաններն ալ կը պատմեն հինգ հազարներու կերակրուիլը: Յովհաննու Աւետարանին մէջ Յիսուս կը յայտարարէ «Ես եմ Կեանքի Հացը»:

Վատիկանի Երկրորդ Ժողովը Սուրբ Հաղորդութիւնը նկարագրած է որպէս սիրոյ խորհուրդ մը, միութեան նշան մը, գթութեան կապ, եւ Զատկական խրախճանք մը՝ ուր Քրիստոս Անձամբ կ'ընդունուի:

Պօղոս Զ Պապը յիշեցուց Եկեղեցիին, թէ Քրիստոսի ներկայութիւնը Սուրբ Հաղորդութեան մէջ Խորհուրդ մըն է, որ կը հասկցուի հաւատքի միջոցով:

Ս. Յովհաննէս Պօղոս Բ. Պապը սորվեցուց, որ հաւատքը մեզ կը հրաւիրէ մօտենալու Սուրբ Հաղորդութեան՝ գիտակցելով թէ մենք կը մօտենանք Քրիստոսին Անձամբ: Անոր ներկայութիւնն է որ իմաստ եւ նշանակութիւն կու տայ Սուրբ Պատարագի միւս բոլոր կողմերուն:

Պենետիկտոս ԺԶ Պապը, Սուրբ Հաղորդութիւնը նկարագրեց որպէս արարչութեան մէջ խոր փոխակերպում ներմուծող, որ ի վերջոյ կը մատնանշէ ամբողջ աշխարհի վերանորոգումը:

Վերջերս, Լեոն ԺԴ Պապը, յիշեցուց Եկեղեցիին, որ Քրիստոս Սուրբ Հաղորդութեան մէջ ներկայ կ'ըլլայ՝ մեզ Իրեն փոխակերպելու համար: Հետեւաբար, Սուրբ Հաղորդութիւնը միայն ընդունուելիք պարգեւ մը չէ, այլ խորհուրդ մը՝ որ մեզ ներսէն կը փոխէ:

Երբ Սուրբ Պատարագի մասնակցինք, ժամանակ անցնենք Երկրպագութեան մէջ, կամ Սուրբ Հաղորդութիւն ստանանք, մենք կը հանդիպինք նոյն Յիսուսին, որ քալեց Գալիլիոյ ճամբաներով, չարչարուեցաւ Գողգոթայի վրայ, մեռելներէն յարութիւն առաւ, եւ այժմ կը թագաւորէ փառքի մէջ:

Անձնական Խորհրդածության Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցեք լրութեան մէջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Ի՞նչ կը նշանակէ ինծի համար որ Յիսուս ճշմարտապէս ներկայ է Սուրբ Հաղորդութեան մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Երբ ես յատկապէս մօտ զգացած եմ Քրիստոսի՝ Սուրբ Պատարագի կամ Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան ժամանակ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Կամ Եկեղեցւոյ ուսուցումին մէջ Սուրբ Հաղորդութեան մէջ Քրիստոսի Իրական Ներկայութեան մասին երեւոյթներ որոնք ես դժուար կը գտնեմ հասկնալ կամ հաւատալ:

4 - Ինչպէ՞ս Քրիստոսի Սուրբ Հաղորդութեան մէջ ներկայութեան նկատմամբ աւելի խոր հաւատքը կրնայ փոխել իմ մասնակցութիւնս Սուրբ Պատարագին:

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցե՛ք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Սուրբ Գրային ընթերցումէն կամ ուսուցումէն ո՞ր կէտը ձեզի ամենէն աւելի տպաւորեց:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ինչո՞ւ կը կարծէք որ Իրական Ներկայութեան մասին հաւատքը կեդրոնական տեղ կը գրաւէ Կաթողիկէ կեանքին մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ինչպե՞ս մեր ժողովրդապետութիւնը կրնայ օգնել մարդկանց աւելի գիտակից դառնալու Քրիստոսի ներկայութեան Սուրբ Հաղորդութեան մէջ:

4 - Ի՞նչ գործնական արգելքներ կը խոչնդոտեն Կաթողիկէ հաւատացեալներուն՝ Սուրբ Պատարագի ընթացքին աւելի խոր կերպով հանդիպելու Քրիստոսին:

Գործնական Գործողութիւն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցէք հետեւեալներէն մէկը կամ աւելին.

- Մասնակցեցէք շաբաթուան մէջ մատուցուող յաւելեալ մէկ Սուրբ Պատարագի:
- Առնուազն տասնըհինգ վայրկեան անցուցէք լուռ աղօթքի մէջ՝ Սուրբ Խորհուրդէն առաջ:
- Կարդացէք եւ աղօթքեցէք Յովհաննու Աւետարանի 6րդ գլուխին հետ:
- Շաբաթուան ընթացքին այցելեցէք եկեղեցի, եւ որոշ ժամանակ լուրբեան մէջ անցուցէք՝ ընդունելով Քրիստոսի ներկայութիւնը խորանին մէջ:
- Ամէն օր աղօթեցէք. «Տէր Յիսուս, խորացուր իմ հաւատքս Ս. Հաղորդութեան մէջ Քու ներկայութեանդ հանդէպ »:

Փակման Աղօթք

Տէր Յիսուս,
Շնորհակալ ենք Քեզի Սուրբ
Հաղորդութեան պարգեւին համար:

Աւելցուր մեր հաւատքը Քու Իրական
Ներկայութեանդ հանդէպ: Օգնէ մեզի
երկիւղածութեամբ մօտենալու Սուրբ
Սեղանին, Երախտագիտութեամբ
ընդունիլու Քեզ,
եւ սիրով պաշտելու Քեզ:

Թող այս ճամբորդութիւնը մեզ պատրաստէ
Քեզի հետ աւելի մօտէն քալելու, աւելի
համարձակօրէն վկայելու Քեզ, եւ ողջունելու
աշխարհասփիւռ Եկեղեցին Սիտնիի մէջ՝
2028-ին:

Մարիամ, Սուրբ Հաղորդութեան Կին,
աղօթէ՝ մեզի համար:

Ամէն:





ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ.
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ՈՐՊԷՍ
ԶՈՂ ԵՒ ՅԻՇԱՏԱԿ

Բացման Աղօթք

Անուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն:

Տէր Յիսուս, Վերջին Ընթրիքի ժամանակ Դուն
մեզի պարգեւեցիր Սուրբ Հաղորդութիւնը
եւ Քու Եկեղեցիիդ յանձնեցիր Քու փրկարար
գոհաբերութեանդ յիշատակը:

Բաց մեր սրտերը աւելի խորապէս հասկնալու
Խորհուրդը զոր կը կատարենք Սուրբ
Պատարագի ժամանակ: Օգնէ՛ մեզ ճանչնալու
Քու սէրդ զոր Խաչին վրայ հեղեցիր մեզի
համար, ներկայացուած մեզի համար Սուրբ
Հաղորդութեան մէջ:

Թող մեր մասնակցութիւնը Սուրբ Պատարագին
մեզ աւելի մօտեցնէ Քեզի եւ փոխակերպէ մեզ
հաւատարիմ աշակերտներու:

Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում Ղուկաս 22.14-20

Երբ ժամը հասաւ, Ան սեղան նստաւ, եւ առաքեալներն ալ իր հետ: Անոնց ըսաւ.

«Շատ փափաքեցայ որ այս Զատիկը ձեզի հետ ուտեմ՝ չարչարուելէս առաջ. որովհետեւ կ'ըսեմ ձեզի, որ բնաւ ասկէ պիտի չուտեմ, մինչեւ Աստուծոյ Թագաւորութեան մէջ գտնուիլս»:

Եւ Ան վերցուց բաժակը, գոհութիւն յայտնեց եւ ըսաւ. «Առէ՛ք ասիկա եւ բաժնեցէ՛ք իրար մէջ. որովհետեւ կ'ըսեմ ձեզի, այսուհետեւ որթատունկին բերքէն պիտի չխմեմ՝ մինչեւ որ Աստուծոյ Թագաւորութիւնը գայ»:

Ապա հացը առաւ, գոհութիւն յայտնեց, կտրեց եւ տուաւ անոնց՝ ըսելով. «Այս է իմ Մարմինս, որ ձեզի համար տրուած է: Ըրէ՛ք ասիկա զիս յիշելու համար»: Ընթրիքէն ետք նոյնպէս բաժակը առաւ եւ ըսաւ. «Այս բաժակը նոր ուխտ է իմ Արիւնովս, որ ձեզի համար կը թափուի»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին վրայ:

Ուսուցման Բաժին Քրիստոսի Զոհաբերութեան Պարզեր

Երբ Կաթողիկէ հաւատացեալները կը հաւաքուին Սուրբ Պատարագի համար, մենք շատ աւելին կ'ընենք քան պարզապէս յիշատակել անցեալի դէպք մը: Մենք կը մտնենք Քրիստոսի փրկարար զոհաբերութեան Խորհուրդին մէջ:

Յովհաննու Աւետարանին մէջ, Յիսուս Իր անձը կը նկարագրէ որպէս կենդանի հացը, որ երկինքէն իջաւ եւ որ Իր մարմինը տուաւ աշխարհի կեանքին համար: Այս խօսքերը կը մատնանշեն ոչ միայն Սուրբ Հաղորդութիւնը, այլեւ Իր զոհաբերութիւնը Խաչին վրայ: Քրիստոս ազատ կամքով ընծայեց Իր կեանքը, որպէսզի մարդկութիւնը կարենայ յաւիտեան մասնակցիլ Աստուծոյ կեանքին:

Վերջին Ընթրիքի ժամանակ Յիսուս ականկալեց այս զոհաբերութիւնը, երբ հացն

ու գինին առաւ եւ ըսաւ. «Այս է իմ Մարմինս, որ ձեզի համար կը տրուի»:

Այս խօսքերով Յիսուս յայտնեց, որ Իր մահը պատմութեան պատահականութիւն մը պիտի չըլլար, այլ սիրոյ ինքնանուիրումի արարք մը՝ աշխարհի փրկութեան համար:

Եկեղեցին կը ստրվեցնէ, որ Սուրբ Հաղորդութիւնը զոհ մըն է, որովհետեւ ան կը ներկայացնէ Քրիստոսի՝ մէկընդմիշտ զոհաբերութիւնը Գողգոթայի վրայ: Խաչի զոհաբերութիւնը չի կրկնուիր: Ընդհակառակը, Սուրբ Հոգիին զօրութեամբ, ան խորհրդաւոր կերպով ներկայ կը դառնայ մեզի համար ամէն Սուրբ Պատարագի մատուցման ժամանակ:

Ահա թէ ինչու Եկեղեցին Սուրբ Պատարագի մասին կը խօսի որպէս «յիշատակ»: Սուրբ Գրքին մէջ յիշատակը շատ աւելին է, քան անցեալի յիշողութիւն մը: Ան Աստուծոյ փրկարար գործին ներկայացումն է: Երբ կը նշենք Սուրբ Հաղորդութիւնը, Քրիստոսի Զատկուայ Խորհուրդը - Իր Չարչարանքը, Մահը, Յարութիւնը եւ Համբարձումը - ներկայ եւ ազդեցիկ կը դառնան մեր կեանքերուն մէջ այսօր:

Հետեւաբար, Սուրբ Հաղորդութիւնը կը միացնէ երկինքն ու երկիրը, անցեալը, ներկան, եւ ապագան: Իւրաքանչիւր Սուրբ Պատարագի ժամանակ մենք կը ներգրաւուինք Քրիստոսի փրկարար գործին մէջ, եւ կը նախաճաշենք երկնային յաւիտենական խրախճանքէն: Սուրբ Հաղորդութիւնը մեզ կ'ուղղէ դէպի Աստուծոյ Թագաւորութեան ապագայ կատարումը՝ միաժամանակ սնուցանելով մեզ ներկային մէջ:

Սուրբ Օսքար Ռոմերօ, որ իր կեանքը տուաւ Աւետարանի ծառայութեան, կը հասկնար, որ Սուրբ Հաղորդութիւնը թէ՛ միսիրարէ, թէ՛ մարտահրաւէր կը նետէ մեզ: Քրիստոսի Մարմինով եւ Արիւնով սնուած՝ մենք կոչուած ենք մեր սեփական կեանքերը ընծայելու ծառայութեան, զոհաբերութեան, արդարութեան եւ սիրոյ մէջ: Սուրբ Պատարագը մեզ կը զօրացնէ ոչ միայն Քրիստոսի պարգեւը ընդունելու, այլ նաեւ ուրիշներուն համար պարգեւ դառնալու:

Ամէն Սուրբ Հաղորդութիւն նոյն ճշմարտութիւնը կը հռչակէ. Քրիստոս Իր անձը տուաւ մեզի համար, եւ մեզ կը հրաւիրէ մեր կեանքերը միացնելու Իր կեանքին:

Անձնական Խորհրդածության Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցեք լրութեան մեջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Ի՞նչ կը նշանակէ ինծի համար , որ Քրիստոսի զոհաբերութիւնը ներկայ է ամէն Սուրբ Պատարագի ընթացքին:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Սուրբ Պատարագը որպէս զոհ հասկնալը ինչպէ՞ս կը խորացնէ իմ մասնակցութիւնը անոր:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Կեանքիս իմ երեւոյթները կը հրաւիրէ Քրիստոս Իր հետ զոհասեղանին վրայ դնելու:

4 - Սուրբ Հաղորդութիւնը ինչպէ՞ս կը զօրացնէ զիս՝ ուրիշներուն համար զոհաբերական կեանք ապրելու:

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցե՛ք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Սուրբ Գրային ընթերցումէն կամ ուսուցումէն ինչը ամէնէն աւելի տպաւորեց ձեզ:

2 - Ինչո՞ւ կարեւոր է հասկնալ, որ Սուրբ Պատարագը պարզ յիշատակութենէ աւելին է:

3 - Սուրբ Հաղորդութիւնը ինչպէ՞ս կը կապէ Վերջին Ընթրիքը, Գողգոթան եւ մեր ներկայ կեանքը:

4 - Ինչպէ՞ս կրնայ Սուրբ Պատարագին մասնակցիլը մեզ անեցնել առատաձեռնութեան եւ անձնուէր սիրոյ մէջ:

Գործնական Գործողութիւն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցէք հետեւեալներէն մէկը կամ աւելին.

- Մասնակցեցէք շաբաթուան մէջ մատուցուող Պատարագի մը, եւ խորհրդածեցէք ընծայման աղօթքներու մասին:
- Ժամանակ յատկացուցէք Աւետարաններէն մէկուն մէջ Չարչարանքին պատմութիւնը կարդալու:
- Անձնական զոհաբերութիւն մը մատուցանեցէք յատուկ մտադրութեան մը համար:
- Աղօթեցէք Խաչի Կայանները:
- Զեր յաջորդ Սուրբ Պատարագի ժամանակ, գիտակցաբար միացուցէք անձնական բեռ մը, մարտահրաւէր, կամ յոյս՝ Քրիստոսի զոհաբերութեամբ:

Փակման Աղօթք

Տէր Յիսուս,
Քու Քու Մարմինդ տուիր մեզի համար
եւ Քու Արինդ հեղեցիր աշխարհի
փրկութեան համար:

Սորվեցուր մեզ աւելի խորը մուտք գործել
Սուրբ Պատարագի Խորհուրդին մէջ: Թող
երբեք չանտեսենք Քու զոհաբերութեանդ եւ
սիրոյ պարգեւը:

Զօրացուր մեզ Սուրբ Հաղորդութեան
միջոցով դառնալու առատաձեռն,
գթասիրտ, եւ ծառայող մարդիկ:

Թող մեր կեանքը միատրուին Քեզ հետ,
Այժմ եւ միշտ:

Ամէն:



**ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ.
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ԿԱՌՈՒՑԱՆԷ
ԵԿԵՂԵՑԻՆ**

Week 3

Բացման Աղօթք

Անուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն:

Տէր Յիսուս,

Դուն մեզ կը կանչես հաղորդութեան՝ Քու
Անձիդ հետ եւ բոլոր անոնց հետ, որոնք Քու
Մարմինիդ կը պատկանին՝ Եկեղեցիին:

Սուրբ Հաղորդութեան պարգեւին միջոցով,
մեզ աւելի մոտեցուր Քեզի եւ զօրացուր մեր
մէջ հաւատքի, յոյսի եւ սիրոյ կապերը:

Սորվեցուր մեզ ապրիլ որպէս մէկ ընտանիք՝
միացած Քու սիրովդ եւ նուիրուած Քու
առաքելութեանդ:

Թող այս աղօթքի եւ խորհրդածութեան պահը
վերանորոգէ մեր փափաքը՝ ծառայելու Քեզի
եւ իրարու:

Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում Ա Կորնթացիք 10.16–17

«Օրհնութեան բաժակը, զոր կ'օրհնենք, միթէ Քրիստոսի արեան հաղորդութիւնը չէ: Հացը, զոր կը կտրենք, միթէ Քրիստոսի Մարմինն հաղորդութիւնը չէ: Քանի որ մէկ հաց կայ, մենք՝ որ բազմաթիւ ենք, մէկ մարմին ենք, որովհետեւ բոլորս ալ այդ մէկ հացին մասնակից կ'ըլլանք»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին վրայ:

Ուսուցման Բաժին Մէկ Հաց, Մէկ Մարմին

Սուրբ Հաղորդութիւնը անձնական հանդիպում մըն է Յիսուս Քրիստոսի հետ, սակայն ան երբեք անձնական փորձառութիւն մը չէ: Ամէն անգամ որ Սուրբ Պատարագի համար կը հաւաքուինք եւ Սուրբ Հաղորդութիւն կը ստանանք, Քրիստոս մեզ կը ներգրաւէ հաղորդութեան մէջ՝ ոչ միայն իր հետ, այլ նաեւ իրարու հետ:

Սուրբ Պօղոս կը յիշեցնէ մեզի, թէ քանի որ կը մասնակցինք մէկ Հացին, կը դառնանք մէկ Մարմին: Սուրբ Հաղորդութիւնը կը կառուցանէ Եկեղեցին՝ հաւատացեալները համախմբելով հաւատքի, յոյսի եւ սիրոյ հաղորդութեան մէջ:

Այս ճշմարտութեան առաջին վկաներէն մէկը Սուրբ Իգնատիոս Անտիոքացին է, եպիսկոպոս մը, որ ապրեցաւ երկրորդ դարու սկիզբը: Իր հաւատքին համար ձերբակալուելով եւ նահատակութեան համար Հռոմ տարուելով՝ Իգնատիոս իր վերջին ճամբորդութիւնը անցուց նամակներ գրելով Քրիստոնեայ համայնքներուն՝ քաջալերելով զանոնք հաւատարիմ մնալու Քրիստոսի եւ միաբան՝ իրարու հետ:

Իգնատիոս իր հաւատքը ստացած էր անոնցմէ, որոնք անձամբ ճանչցած էին Առաքեալները: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ ան Սուրբ Յովհաննէս Առաքեալի աշակերտն էր՝ այն սիրելի աշակերտին, որ ներկայ եղած էր Վերջին Ընթրիքին եւ Խաչին ստորոտը: Հետեւաբար, Իգնատիոս ստացաւ կենդանի հաւատք Քրիստոսի հանդէպ եւ խոր

յարգանք՝ Սուրբ Հաղորդութեան հանդէպ:

Մինչ ան կը պատրաստուէր իր կեանքը տալ Քրիստոսի համար, Իգնատիոս խորապէս խորհրդածեց Սուրբ Հաղորդութեան իմաստին վրայ: Ան տեսաւ, թէ Յիսուս ամէն ինչ տուած էր աշխարհի կեանքին համար, եւ համոզուած էր, որ իւրաքանչիւր Քրիստոնեայ կոչուած էր նոյն անձնուէր սիրոյ ոգիով պատասխանելու:

Իգնատիոսի համար, Սուրբ Հաղորդութիւնը պարզապէս ընդունուելիք բան մը չէր. ան կեանքի ձեւ մըն էր: Քրիստոս Սուրբ Հաղորդութեան մէջ ամբողջապէս իր անձը կը պարգեւէ մեզի եւ այդպէս ընելով, մեզ կը համախմբէ որպէս իր Մարմինը՝ Եկեղեցին: Սուրբ Հաղորդութիւն ընդունիլ կը նշանակէ թոյլ տալ, որ մեր կեանքերը ձեւաւորուին Քրիստոսի անձնուէր սիրով:

Սուրբ Հաղորդութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ մենք իրարու կը պատկանինք: Ան մեզի մարտահրաւէր կը նետէ անցնելու անհատականութենէ անդին, եւ գիտակցելու, թէ մեր հաւատքը կ'ապրինք համայնքի մը մէջ: Մենք միասին կը պաշտենք, միասին կ'աղօթենք, միասին կը տառապինք եւ միասին կը ցնծանք, որովհետեւ միացած ենք Քրիստոսի մէջ:

Այս միութիւնը կը տարածուի մեր տեղական ժողովրդապետութեան սահմաններէն անդին: Սուրբ Հաղորդութեան իւրաքանչիւր տօնակատարութիւն մեզ կը միացնէ աշխարհի բոլոր Կաթողիկէներուն եւ բոլոր սերունդներուն: Սուրբերը, որոնք մեզմէ առաջ անցան, ներկայ հաւատացեալները որոնք կ'աղօթեն այսօր, եւ անոնք, որոնք պիտի գան մեզմէ յետոյ, բոլորը միացած են Քրիստոսի մէկ Մարմինին մէջ:

Սուրբ Իգնատիոս մեզ կը յիշեցնէ, թէ Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ Հաղորդութեան մէջ ըլլալ: Սուրբ Հաղորդութեան մէջ Քրիստոս ընդունիլը կը նշանակէ թոյլ տալ, որ Ան փոխակերպէ մեր սրտերը, խորացնէ մեր հաղորդութիւնը ուրիշներու հետ, եւ զօրացնէ մեր նուիրումը՝ ծառայելու Եկեղեցիին եւ աշխարհին:

Մինչ կը պատրաստուինք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին եւ 2028-ի Միջազգային Ս. Հաղորդութեան Համագումարին, կը հրաւիրուինք մենք մեզ հարցնելու. Ինչպէ՞ս Հաղորդութիւնը կը ձեւաւորէ մեր ժողովրդապետութեան համայնքը: Ինչպէ՞ս ան մեզի կ'օգնէ դառնալու մէկ Մարմին Քրիստոսի մէջ:

Անձնական Խորհրդածության Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցեք լրութեան մէջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Ի՞նչ կը նշանակէ ինծի համար պատկանիլ Քրիստոսի Մարմինին:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ինչպէ՞ս Սուրբ Հաղորդութեան մասնակցութիւնը զօրացուցած է իմ կապս եկեղեցիին հետ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ընտանիքիս, ծուխիս, աշխատավայրիս կամ համայնքիս մէջ կամ
յարաբերութիւններ, որոնք բժշկութեան կամ հաշտեցնելու կարիք
ունին:

4 - Ինչպէ՞ս Քրիստոս զիս կը կանչէ աւելի լիարժէք կերպով ապրելու
ուրիշներու հետ հաղորդութեան մէջ

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցե՛ք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Սուրբ Իգնատիոսի վկայութեան ո՞ր երեւոյթը կը ներշնչէ կամ կը մարտահրաւէր կը նետէ ձեզի:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ինչո՞ւ կը կարծէք որ Հաղորդութիւնը կարեւոր է Եկեղեցւոյ միութեան համար:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ի՞նչ են իսկական Հաղորդակից ծխական խորհուրդի մը որոշ
նշանները:

4 - Ինչպե՞ս մեր ծուխը կրնայ աւելի լաւ կերպով խթանել
ընդունելիութեան, պատկանելիութեան եւ հաղորդութեան ոգին:

Գործնական Գործողութիւն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցէք հետեւեալներէն մէկը կամ աւելին.

- Ծանօթացէք Սուրբ Պատարագին ներկայ գտնուող մէկու մը հետ՝ զոր չէք ճանչնար:
- Աղօթեցէք ձեր ժողովրդապետութեան եւ Տիեզերական Եկեղեցւոյ միութեան համար:
- Ձեռք երկարեցէք մէկու մը՝ որ կրնայ իրեն մեկուսացած կամ համայնքէն հեռացած զգալ:
- Խորհրդածեցէք, թէ կա՞յ յարաբերութիւն մը, որ հաշտեցման կարիք ունի, եւ առէք քայլ մը դէպի բուժում՝ ներառեալ Հաշտութեան Խորհուրդին միջոցով:
- Ամէն օր աղօթեցէք աշխարհի այն Քրիստոնեաներուն համար, որոնք իրենց հաւատքին պատճառով հալածանք կը կրեն:

Փակման Աղօթք

Տէր Յիսուս,
Դուն մեզ մէկ մարմնի մէջ կը հաւաքես
Սուրբ Հաղորդութեան պարգեւով:

Օգնէ մեզի զիրար ճանչնալու որպէս եղբայրներ եւ քոյրեր՝
Քրիստոսի մէջ: Սուրվեցուր մեզի ապրիլ սիրոյ, խոնարհութեան
եւ միութեան մէջ:

Թող մեր մասնակցութիւնը Սուրբ Հաղորդութեան զօրացնէ
մեր յանձնառութիւնը՝ կառուցանելու Քու Եկեղեցիդ, եւ
ծառայելու իրար՝ առատաձեռն սրտերով:

Մինչ կը շարունակենք մեր ուխտագնացութիւնը դէպի «Քալել
Քրիստոսի Հետ» թափօրը, մեզ դարձուր ժողովուրդ մը՝
միացած հաւատքով, յոյսով եւ սիրով:

Սուրբ Իգնատիոս Անտիոքացի, աղօթէ՝ մեզի համար:

Ամէն:





**ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ:
ԵՐԿՐՈՍԳՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ
ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ**

Week 4

Բացման Աղօթք

Անուն Հօր, եւ Որդւոյ, եւ Սուրբ Հոգւոյ. Ամէն:

Տէր Յիսուս,

ներկայ Սուրբ Խորհուրդին մէջ, Դուն կը
սպասես մեզ համբերութեամբ եւ սիրով:

Քու ներկայութեանդ լռութեան մէջ,
ստրվեցուր մեզ լսել Քու ձայնդ,
հանգչիլ Քու սիրոյդ մէջ,
եւ բանալ մեր սրտերը Քու շնորհքիդ:

Թող այս խորհրդածութեան ժամանակը,
խորացնէ մեր բարեկամութիւնը Քեզի հետ
եւ մեր մէջ արթնցնէ աւելի մեծ ցանկութիւն՝
միշտ մնալու Քեզ մօտ:

Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում

Ղուկաս 10.38-42

Երբ անոնք կ'երթային, ան մտաւ յատուկ զիւղ մը, ուր Մարթա անունով կին մը զինք ընդունեց իր տունը: Ան ունէր քոյր մը՝ Մարիամ անունով, որ նստած էր Տիրոջ ոտքերուն քով եւ կը լսէր Անոր խօսքերը: Սակայն Մարթա զբաղած էր բազմաթիւ գործերով. ուստի, ան մօտեցաւ Անոր, եւ հարցուց. «Տէր, քու հոգդ չէ՞, որ քոյրս զիս մինակ ձգած է ամբողջ գործը առանձինս ընելու: Ըսէ անոր, որ ինծի օգնէ»: Բայց Տէրը պատասխանեց անոր, «Մարթա, Մարթա, դուն շատ բաներու համը կը մտահոգուիս եւ կը տագնապիս, բայց միայն մէկ բան պէտք է: Մարիամ ընտրած է աւելի լաւ մասը, որ պիտի չառնուի իրմէ»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին շուրջ:

Ուսուցման Բաժին

Տիրոջ Հետ Մնալ

Աւետարաններուն մէջ կը տեսնենք որ մարդիկ կը քաշուէին Յիսուսի ներկայութեան մէջ: Ոմանք կը լսէին անոր ուսուցումը լեռան լանջին: Ուրիշներ, կը հետեւէին Անոր փոշոտ ճամբաներու վրայ: Ոմանք լուռ կերպով կը նստէին Անոր ոտքերուն քով: Անոնց կեանքերը կը փոխուէին պարզապէս Անոր հետ ըլլալով:

Այսօր մենք կը հրաւիրուինք այդ միենայն հանդիպումին՝ Հաղորդութեան Երկրպագութեան միջոցով:

Եկեղեցին կը սորվեցնէ, որ Քրիստոս ճշմարտապէս ներկայ է Սուրբ Խորհուրդին մէջ: Որովհետեւ Ան ճշմարտապէս ներկայ է, կրնանք գալ Անոր առջեւ աղօթքով, երկրպագել Անոր, սրտանց խօսիլ Անոր հետ, եւ հանգչիլ հանդարտօրէն Անոր ներկայութեան մէջ:

Սուրբ Հաղորդութիւնը աւելին է քան անցեալի դէպքերու յիշատակ մը: Սուրբ Պատարագի Խորհուրդին միջոցով Քրիստոսի փրկարար գործը կը ներկայանայ մեզի: Սուրբ Հաղորդութիւնը կը միացնէ երկինքն ու երկիրը, անցեալն ու ներկան, ժամանակն ու յաւիտենականութիւնը: Ամէն Սուրբ Պատարագ մեզ կը ներքաշէ Քրիստոսի Չարչարանքին, Մահուան եւ Յարութեան Խորհուրդին մէջ, եւ մեզի կը պարգեւէ երկնային խնջոյքի նախահամը:

Այս նոյն Խորհուրդը կը շարունակուի Սուրբ Պատարագէն անդին՝ Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան մէջ: Երբ կը ծնրադրենք Սուրբ Խորհուրդին առջեւ, մենք կը գտնուինք յարուցեալ Տիրոջ ներկայութեան մէջ: Մենք մեր աղօթքը կը միացնենք Տիեզերական Եկեղեցի աղօթքին, եւ կը միանանք աշխարհի մէջ բոլոր անոնց՝ որոնք Քրիստոսը կը պաշտեն:

Սուրբ Հաղորդութիւնը նաեւ կը յիշեցնէ մեզ որ մենք առանձին չենք մեր հաւատքին մէջ: Քրիստոսի միջոցով մենք միացած ենք երկնքի սուրբերուն, երկրի հաւատացեալներուն, եւ բոլոր անոնց, որ մեզմէ առաջ գացած են՝ դրոշմուած հաւատքի նշանով: Երկրպագութեամբ, մենք կը ներքաշուինք սիրոյ այս մեծ հաղորդութեան մէջ, որ կը տարածուի ժամանակէն ու անջրպետէն անդին:

Շատեր կու գան Սուրբ Խորհուրդին առջեւ՝ պատասխաններ փնտռելով: Ուրիշներ կու գան կրելով բեռ, նեղութիւն, կամ վիշտ: Իսկ ոմանք ալ պարզապէս կու գան Տիրոջ հետ ժամանակ անցնելու: Ինչ որ ալ մեզ կը բերէ Երկրպագութեան, Քրիստոս կ'ընդունի մեզ:

Սուրբ Խորհուրդին առջեւ աղօթքը շատ խօսքեր չի պահանջեր: Երբեմն ամենէն արդիւնաւետ աղօթքը պարզապէս Յիսուսի հետ մնալն է: Ինչպէս բարեկամներ կը մտերմանան միասին ժամանակ անցընելով, նոյնպէս մեր բարեկամութիւնը Քրիստոսի հետ կը խորանայ, երբ մենք կը մնանք Անոր ներկայութեան մէջ:

Սուրբ Հաղորդութեան Երկրպագութիւնը մեզ կը սորվեցնէ լսել: Աղմուկով եւ շեղումներով լեցուն աշխարհի մը մէջ, Քրիստոս մեզ կը հրաւիրէ լուռ մնալու: Ան մեզի կը յիշեցնէ, որ մեր արժէքը չի բխիր մեր կատարած գործերէն, այլ թէ՛ ո՞վքեր ենք մենք. Աստուծոյ սիրելի որդիներն ու դուստրերը:

Սուրբերը այս լաւ կը հասկնային: Դարերու ընթացքին անթիւ տղամարդիկ եւ կիներ ճանչցած են, թէ Սուրբ Խորհուրդին առջեւ անցուցած ժամանակը կը զօրացնէ հաւատքը, կը վերանորոգէ յոյսը եւ կը խորացնէ սէրը: Երկրպագութիւնը մեզ աշխարհէն չի հեռացներ: Ընդհակառակը, ան մեզ կը պատրաստէ աշխարհ վերադառնալու՝ Քրիստոսով վերափոխուած սրտերով:

Մինչ կը պատրաստուինք «Քայլել Քրիստոսի Հետ» 2026-ին, եւ 2028-ի Միջազգային Հաղորդութեան Համագումարին, մենք կը հրաւիրուինք վերագտնելու պարզապէս Յիսուսի հետ ըլլալու գեղեցկութիւնը՝ որ ճշմարտապէս ներկայ է Սուրբ Հաղորդութեան մէջ:

Անձնական Խորհրդածության Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցեք լրութեան մէջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Ի՞նչ տեղ ունի լուռ աղօթքը Քրիստոսի հետ իմ յարաբերութեանս մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Երբ ես ամենախոր կերպով զգացած եմ Աստուծոյ ներկայութիւնը աղօթքի մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ի՞նչ շեղումներ կամ խոչընդոտներ կը դժուարացնեն որ ժամանակ անցնեն՝ Տիրոջ հետ::

4 - Ինչպե՞ս կանոնաւոր Սուրբ Հաղորդութեան Երկրպագութիւնը կրնայ զօրացնել իմ հաւատքս եւ աշակերտութիւնս:

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցե՛ք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Սուրբ Գրքի ընթերցումէն կամ ուսուցման բաժինէն ի՞նչ ամենէն շատ առանձնացաւ ձեզի համար:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ի՞նչ եղած է ձեր փորձառութիւնը Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան հետ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ինչո՞ւ լռությունը կարելու է հոգեւոր կեանքի մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

4 - Ինչպէ՞ս մեր ժողովրդապետությունը կրնայ քաջալերել աղօթքի անելի խոր մշակոյթ Սուրբ Խորհուրդին առջեւ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Գործնական Գործողութիւն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցէք հետեւեալներէն մէկը կամ աւելին.

- Առնուազն երեսուն վայրկեան անցուցէք Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան մէջ:
- Շաբաթուան ընթացքին այցելեցէք եկեղեցի, եւ ժամանակ անցուցէք Սուրբ Խորանին առջեւ աղօթելով:
- Ամէն օր սկսեցէք հինգ վայրկեան լուռ աղօթքով:
- Կարդացէք եւ աղօթեցէք Ղուկաս 10.38-42-ի հետ, երեակայելով, որ նստած էք Յիսուսի ոտքերուն քով:
- Օրագիր պահեցէք՝ Տիրոջ հետ լռութեան ժամանակ ստացուած մտքերու, աղօթքներու, կամ ներշնչումներու մասին:

Փակման Աղօթք

Տէր Յիսուս,
որ ներկայ ես Սուրբ Խորհուրդին մէջ,
շնորհակալ ենք քու ներկայութեանդ պարգեւին համար:

Սորվեցուր մեզի փնտռել Քեզ լռութեան մէջ,
վստահիլ Քեզի անորոշութեան պահերուն,
եւ ամէն օր մնալ քու մօտդ:

Թող մեր սրտերը ուշադիր ըլլան քու ձայնիդ,
եւ մեր կեանքերը վերափոխուին քու սիրովդ:

Մինչ մենք կը շարունակենք մեր
ճամբորդութիւնը դէպի «Քալէ Քրիստոսի Հետ»
թափօր, մեզ աւելի խոր քաշէ Քեզի հետ
հաղորդութեան մէջ:

Մարիամ, Սուրբ Հաղորդութեան Կին,
աղօթէ՛ մեզի համար:

Ամէն:





ՀԻՄՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ:
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Week 5

Բացման Աղօթք

Անուն Հօր, եւ Որդւոյ, եւ Սուրբ Հոգւոյ. Ամէն:

Տէր Յիսուս,
Դուն մեզ կը սնունդանես Քու Մարմինովդ եւ
Արիւնովդ եւ մեզ կ'ուղարկես յայտարարելու
Քու սէրդ:

Բաց մեր սրտերը, ճանչնալու Քեզ,
թէ Սուրբ Հաղորդութեան մէջ, թէ անոնց մէջ
որոնց ամէն օր կը հանդիպինք:

Օգնէ մեզ դառնալու հաւատարիմ
առաքելական աշակերտներ,
պատրաստ ծառայելու ուրիշներուն՝
առատաձեռնութեամբ, գթութեամբ եւ
քաջութեամբ:

Թող Քու Սուրբ Խորանէդ մեր ստացած շնորհը
պտուղ տայ մեր տուններուն,
աշխատավայրերուն,
ժողովրդապետութիւններուն, եւ
համայնքներուն մէջ:

Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում

Մատթեոս 25.35-40

«Որովհետև Քաղցած էի, եւ ինծի կերակուր տուիք, ծարաւ էի, եւ ինծի խմելու բան մը տուիք, օտար էի, եւ զիս ընդունեցի, մերկ էի, եւ զիս հագցուցիք. հիւանդ էի, եւ զիս խնամեցիք. բանտի մէջ էի, եւ ինձ այցելեցիք: Այն ատեն արդարները կը պատասխանեն Անոր. «Տէ՛ր, էրբէ տեսանք քեզ քաղցած ու կերակուր տուինք, կամ ծարաւ ու խմելու բան մը տուինք: Եւ, էրբէ տեսանք քեզ օտար ու ընդունեցինք, կամ մերկ ու հագցուցինք: Երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ եւ այցելեցինք քեզ»: Եւ Թագաւորը կը պատասխանէ անոնց. «Ճշմարիտ կ'ըսեն՝ ձեզի, ինչ որ ըրիք իմ այս փոքրագոյններէն մէկուն որ իմ ընտանիքիս անդամներն են, ինծի ըրիք»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին վրայ:

Ուսուցման Բաժին

Քրիստոսի կողմէ ուղարկուած

Ամէն Սուրբ Պատարագ կ'աւարտի առաքելութեամբ մը:

Աստուծոյ խօսքը լսելէ եւ Քրիստոսը Սուրբ Հաղորդութեան մէջ ընդունելէ ետք, մենք կ'ուղարկուինք ապրելու այն, ինչ որ տօնած ենք: Սուրբ Պատարագի աւարտին արձակումը պարզապէս արարողութեան վերջաւորութիւնը չէ, ան յանձնարարութիւն մըն է: Քրիստոս մեզ կը սնուցանէ, որպէսզի մենք Իր ներկայութիւնը դառնանք աշխարհի մէջ:

Սուրբ Հաղորդութիւնը Քրիստոնէական կեանքի աղբիւրն ու գազաթնակէտն է, սակայն ան երբեք նախատեսուած չէ եկեղեցւոյ պատերէն ներս մնալու համար: Քրիստոսը որուն մենք կը հանդիպինք Սուրբ Սեղանին վրայ, մեզ կ'ուղարկէ հանդիպելու Իրեն մեր դրացիին մէջ, յատկապէս անոնց մէջ որոնք աղքատ են, կը տառապին, միայնակ են, մոռցուած, կամ կարիքաւոր:

Աստրալիոյ մէջ, այս Հաղորդութեան հոգեւորութեան ամենէն յստակ օրինակներէն մէկը Խաչի Սուրբ Մարիամ Մաքթիլլոփն է:

Մարիամ Մաքթիլլոփ խորապէս նուիրուած էր Սուրբ Հաղորդութեան: Անոնք որ զինք

ճանչցած են, կը յիշեն Սուրբ Խորհուրդին առջեւ անոր անցուցած երկար ժամերը: Քրիստոսի ներկայութեան մէջ էր որ ան կը գտնէր զօրութիւն, առաջնորդութիւն, եւ քաջութիւն՝ դժուարութիւններու եւ ընդդիմութիւններու մէջէն անցնելու համար:

Սակայն Մարիամի աղօթքը երբեք չէր բաժնուէր աշխարհի կարիքներէն: Ան կը հասկնար, որ այն Քրիստոսը զոր ինք կը պաշտէր Սուրբ Հաղորդութեան մէջ, նոյն Քրիստոսն էր, որ ներկայ էր աղքատներուն, խոցելիներուն, եւ մոռցուածներուն մէջ: Տէրը որ զինք աղօթքի կը կանչէր, նոյնպէս կը կանչէր ծառայութեան:

Այս համոզումը ձեւաւորեց անոր կեանքն ու առաքելութիւնը: Անոր յայտնի խորհուրդն էր՝ «Երբ կարիք մը տեսնես, մի անցնիր առանց բան մը ընելու»:

Մարիամ հաստատ էր Սուրբ Հաղորդութեան իր խոր հաւատքին մէջ: Ան կը հաւատար որ Քրիստոսի հանդէպ սէրը պէտք է միշտ առաջնորդէ սիրոյ՝ դէպի դրացիին հանդէպ, եւ կը յիշեցնէր իր Քոյրերուն: «Երբեք մի մոռնաք թէ ով է ան որուն կը հետեւիք»:

Այս երկու սկզբունքները անբաժանելի են: Ուրիշներուն կը ծառայենք, որովհետեւ Յիսուսի կը հետեւինք: Յիսուսին կը հետեւինք՝ Զինք ուրիշներուն մէջ ճանչնալ սորվելով:

Հետեւաբար, Սուրբ Հաղորդութիւնը կը փոխէ մեր աշխարհընկալումը: Երբ կ'ընդունինք Քրիստոսի Մարմինն ու Արիւնը, կը ներքաշուինք Անոր անձնուէր սիրոյն մէջ: Կը սկսինք մարդիկը տեսնել ոչ թէ որպէս օտարներ կամ լուծուելիք խնդիրներ, այլ որպէս Աստուծոյ սիրելի եղբայրներ եւ քոյրեր:

Որքանաւելի մուտք գործենք Սուրբ Հաղորդութեան մէջ, այնքան աւելի կը հրաւիրուինք դառնալու գրութեան, արդարութեան, ողորմածութեան եւ ծառայութեան մարդիկ: Քրիստոս, իր անձը ամբողջութեամբ կու տայ մեզի համար, եւ կը խնդրէ մեզմէ մեր կեանքերը պարգեւ դարձնել ուրիշներուն:

Մինչ կը պատրաստուինք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին, եւ 2028-ի Միջազգային Սուրբ Հաղորդութեան Համագումարին, կը հրաւիրուինք մենք մեզի հարց տալու. Ինչպէ՞ս Սուրբ Հաղորդութիւնը կը ձեւաւորէ իմ կեանքս: Ինչպէ՞ս Քրիստոս զիս առաքելութեան կ'ուղարկէ: Որո՞նք ծառայելու կը հրաւիրէ զիս:

Սուրբ Հաղորդութիւնը Քրիստոնէական ճամբորդութեան վերջը չէ: Ան՝ Քրիստոսով վերափոխուած եւ աշխարհի կեանքին համար հեղուած կեանքի մը սկիզբն է:

Անձնական Խորհրդածության Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցե՛ք լրութեան մէջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Ինչպէ՞ս Սուրբ Հաղորդութեան մասնակցութիւնս ազդած է ուրիշներուն հետ վարուելակերպիս վրայ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ո՞ր կը հանդիպիմ Քրիստոսի՝ իմ շուրջս գտնուող մարդոց մէջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ի՞նչ կարիքներ կը նկատեն ընտանիքիս, ժողովրդապետութեան,
աշխատավայրիս, կամ համայնքիս մէջ:

4 - Ինչպէ՞ս Քրիստոս զիս կը հրաւիրէ աւելի առատաձեռնօրէն ծառայելու:

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցեք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Ի՞նչ բան ձեզի համար կ'առանձնանայ Սուրբ Մարիամ Մաքթելլոփի վկայության մեջ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ինչո՞ւ կարելու է Սուրբ Հաղորդության պաշտամունքը կապել ուրիշներուն ծառայելու գործին:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ի՞նչպէս մեր ժողովրդապետութիւնը, հոգեւորականութիւնը կամ համայնքը կրնայ դառնալ աւելի տեսականօրէն առաքելական եւ դէպի դուրս ուղղուած:

4 - Ի՞նչ գործնական ձեւերով կրնանք վկայել Քրիստոսի սէրը մեր տեղական համայնքին մէջ:

Գործնական Գործողութիւն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցէք հետեւեալներէն մէկը կամ աւելին.

- Գիտակցաբար բարի գործ մը կատարեցէք կարիքաւոր անձի մը համար:
- Այցելեցէք կամ կապ հաստատեցէք մէկու մը հետ, որ կրնայ միայնակ, հիւանդ կամ մեկուսացած զգալ:
- Կամաւոր ծառայութիւն մատուցանեցէք ժողովրդապետական ծառայութեան մը, բարեսիրական կազմակերպութեան մը, կամ մօտեցան նախաձեռնութեան մը:
- Ամէն օր աղօթեցէք դժուարութիւններու մէջ գտնուող անձի մը համար:
- Խորհրդածեցէք Մարիամ Մաքթիլլոփի խօսքին վրայ. «Երբ կարիք մը տեսնես, մի՛ անցնիր առանց բան մը ընելու», եւ, արձագանքեցէք այն կարիքներէն մէկուն՝ որուն պիտի հանդիպիր շաբաթուան կամ երկշաբաթուան ընթացքին:

Փակման Աղօթք

Տէր Յիսուս,
Դուն քեզ ամբողջութեամբ նուիրեցիր աշխարհի կեանքին
համար:

Լեցուր մեզ Սուրբ Հաղորդութեան շնորհքով
որպէսզի դառնանք Քու սիրոյդ գործիքները:

Օգնէ մեզի ճանչնալու Քեզ աղքատներուն, տառապողներուն,
միայնակներուն, եւ կարիքաւորներուն մէջ:

Տո՛ւր մեզ առատաձեռն սիրտեր, պատրաստ ծառայելու՝
առանց գինը հաշուելու, եւ քաջարի հաւատք, պատրաստ
վկայելու Քու Աւետարանիդ մասին՝ ուր որ
Դուն մեզ ուղարկես:

Թող երբեք չի մոռնանք թէ ով է Ան որուն կը հետեւինք:

Սուրբ Մարիամ Խաչի Մաքթիլլոփ,
աղօթէ մեզի համար:

Ամէն:





Վեցերոդ Բաժին:
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ ՔԱՆԵԼՈՎ

Week 6

Բացման Աղօթք

Անուն Հօր, եւ Որդւոյ, եւ Սուրբ Հոգւոյն: Ամէն:

Տէր Յիսուս Քրիստոս, Դուն բոլոր դարերու
ընթացքին Քու ժողովուրդիդ հետ կը քալես:

Դուն կ'ուղեկցիս մեզ ուրախութեան եւ
տխրութեան պահերուն, կը զօրացնես
մեզ Սուրբ Հաղորդութեան մէջ Քու
ներկայութեամբդ, եւ կը կոչես մեզ՝ Քեզի
վկայելու աշխարհին առջեւ:

Մինչ կը պատրաստուինք «Քալել Քրիստոսի
Հետ» թափօրին», լեցուր մեզ քաջութեամբ,
հաւատքով, եւ ուրախութեամբ:

Թող մեր կեանքերը յայտարարեն Քու
բարութիւնդ, մեր խօսքերը խօսին Քու սիրոյդ
մասին, եւ մեր գործերը արտացոլան Քու
ողորմութիւնդ:

Առաջնորդէ մեզ ամէլի մօտ Քեզի,
եւ մեզ դարձուր Քու Աւետարանիդ
հաւատարիմ վկաները:

Ամէն:

Սուրբ Գրքի Ընթերցում

Ղուկաս 24.28-35

Երբ մօտեցան այն գիւղին ուր կերթային, Ան այնպէս ձեռացուց, թէ պիտի շարունակէին: Բայց անոնք պնդեցին ըսելով՝ «Մեզի հետ մնայ, որովհետեւ երեկոն մօտ է, եւ օրը արդէն կը մթագնի»: Ան ալ մտաւ՝ իրենց հետ մնալու: Երբ անոնց հետ սեղան նստաւ, վերցուց հացը, օրհնեց, կտրեց եւ տուաւ անոնց: Այն ատեն անոնց աչքերը բացուեցան, եւ ճանչցան Զինք, բայց ան անհետացաւ իրենց տեսողութենէն: Անոնք իրարու կ'ըսէին, «Զէ՞» որ մեր սրտերը մեր մէջ կը բորբոքէին, երբ ճամբուն վրայ մեզի հետ կը խօսէր, եւ Սուրբ Գիրքերը կը մեկնէր մեզի»:

Նոյն ժամուն ելան ու Երուսաղէմ վերադարձան, ուր գտան Տասնըմէկը, եւ անոնց ընկերները միասին հաւաքուած: Անոնք կ'ըսէին, «Տէրը իսկապէս յարութիւն առած է, եւ երեցած է Սիմոնին»: Այն ատեն անոնք պատմեցին, թէ ինչ պատահած էր ճամբուն վրայ, եւ ինչպէս Յիսուս ինքզինք իրենց ճանչցուց հացը կտրած պահուն»:

Մի քանի վայրկեան լռութեան մէջ խորհրդածեցէք այս հատուածին շուրջ:

Ուսուցման Բաժին

Անդամի Քրիստոսի Վկաները

Աւետարաններուն մէջ, Յիսուսին հանդիպողները երբեք անփոփոխ չէին մնացած: Առաջին աշակերտները ձգեցին իրենց ուրկանները եւ հետեւեցան Անոր՝ սկսելով աշակերտութեան նոր կեանք մը: Սամարացի կինը, ջրհորին մօտ Քրիստոսի հանդիպելէ ետք, վերադառնաւ քաղաք եւ ուրիշներուն պատմեց իր հանդիպումին բարի լուրը: Էմմաուսի ճամբուն վրայ, աշակերտները ճանչցան յարուցեալ Տէրը հացը կտրելու ժամանակ, եւ անմիջապէս վերադառնան Երուսաղէմ՝ յայտարարելու այն ինչ որ տեսած ու լսած էին: Սուրբ Գիրքը կրկին ու կրկին ցոյց կու տայ մեզի, որ Քրիստոսի հետ ճշմարիտ հանդիպումը բնականաբար կ'առաջնորդէ վկայութեան եւ առաքելութեան:

Նոյնն է նաեւ մեզի համար այսօր: Սուրբ Հաղորդութիւնը միայն ընդունուելու պարգեւ մը չէ, այլ նաեւ բաժնեկցելու պարգեւ մըն է:

Ամէն Սուրբ Պատարագի ընթացքին, Քրիստոսի Մարմնով եւ Արիւնով սնուցուելէ ետք, մենք կ'ողորկուինք ապրելու եւ յայտարարելու Սուրբ Աւետարանը: Անոր ներկայութեամբ զօրացած, կոչուած ենք Քրիստոսը տանելու մեր տուները, աշխատավայրերը, դպրոցները, ժողովրդապետութիւնները եւ համայնքները՝ աշխարհին մէջ Անոր սիրոյն վկաները դառնալով:

Ասիկա, «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին աւելի խոր իմաստն է:

Սուրբ Հաղորդութեան թափօր մը շատ աւելին է, քան հասարակական հաւաք մը կամ կրօնական ձեռնարկ մը: Ան՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի տեսանելի յայտարարութիւնն է, որ ճշմարտապէս ներկայ է Սուրբ Խորհուրդին մէջ: Երբ Կաթողիկէ հաւատացեալներ կը քալեն միասին՝ աղօթքով, շարականով եւ վկայութեամբ, անոնք հրապարակաւ կը հաստատեն այն, ինչ որ կը հաւատան՝ թէ Քրիստոս կը մնայ իր ժողովուրդին հետ եւ կը շարունակէ բոլոր մարդիկը դէպի Իրեն ներքաշել:

Եկեղեցւոյ պատմութեան ամբողջ ընթացքին, Սուրբ Հաղորդութեան թափօրները եղած են աղօթքի, գոհաբանութեան, աւետարանչութեան, եւ հանրային վկայութեան պահեր: Անոնք մեզի կը յիշեցնեն, որ մեր հաւատքը սահմանափակուած չէ եկեղեցական շէնքերու մէջ, այլ կոչուած է ապրելու եւ յայտարարելու կեանքի ամէն բնագաւառի մէջ:

Երբ մենք կը մասնակցինք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին՝ քալելով մեր քաղաքի փողոցներէն, մենք կը վկայենք այն յոյսի մասին, որուն աշխարհը կը կարօտի: Մենք կ'ընդունինք որ Քրիստոս Տէրն է ոչ միայն մեր սրտերուն, այլեւ ամէն մարդկային կեանքի, ամէն ընտանիքի, ամէն համայնքի, եւ ամէն ազգի:

Այս վկայութիւնը յատկապէս կարեւոր է այսօր: Շատեր իմաստ, պատկանելիութիւն, ներում եւ յոյս կը փնտռեն: Ուրիշներ կրնան հեռացած ըլլալ հաւատքէն, կամ երբեք անձնապէս չեն հանդիպած Քրիստոսին: Հանրային վկայութեան պարզ արարք մը կրնայ հրաւեր դառնալ մէկու մը՝ որ իր առաջին քայլը առնէ դէպի Աստուած:

2028-ի Միջազգային Սուրբ Հաղորդութեան Համագումարը եզակի առիթ մը պիտի ընծայէ Աստուալիոյ Եկեղեցիին՝ ողջունելու աշխարհի չորս կողմերէն եկող ուխտաւորներուն, եւ նորոգ յայտարարելու Սուրբ Հաղորդութեան գեղեցկութիւնը: Մեր պատրաստութիւնը այդ պահուն համար, կը սկսի հիմա՝ աղօթքի, ապաշխարհութեան, աշակերտութեան եւ առաքելութեան միջոցով:

«Քալել Քրիստոսի Հետ» թափօրը այդ ճամբորդութեան կարեւոր քայլերէն մէկն է:

Մինչ կը պատրաստուինք մասնակցելու, հրաւիրուած ենք ոչ միայն թափօրի մը մասնակցելու, այլեւ մեր առօրեայ կեանքին մէջ Սուրբ Հաղորդութեան վկաներ դառնալու: Մեր մատուցած ամենաուժեղ վկայութիւնը, դրօշ մը, շարական մը, կամ թափօրի երթուղի մը չէ, այլ Քրիստոսով վերափոխուած կեանք մը:

Որպէս Քրիստոսի հետեւորդներ, մեր կեանքերը պէտք է վկայեն այն վերափոխութեան մասին, որ կը բխի Սուրբ Հաղորդութեան մէջ անոր հանդիպումէն: Ուրիշներ մեր մէջ պէտք է տեսնեն հաւատք մը, որ Աստուծոյ կը վստահի՝ նոյնիսկ անորոշութեան մէջ, յոյս մը, որ կը յարատեւէ դժուարութիւններու ընթացքին, եւ սէր մը, որ կը դրսեւորուի ուրիշներուն հանդէպ առատաձեռն ծառայութեանբ: Անոնք պէտք է

զգան ուրախութիւն մը, որ կը բխի Քրիստոսը ճանչնալէ, եւ պատրաստակամութիւն մը, բաժնեկցելու Բարի Լուրը մեր շուրջիններուն հետ: Այս կերպով, մեր խօսքերն ու գործերը կենդանի վկայութիւն կը դառնան մեր մէջ գործող Քրիստոսի ներկայութեան:

Սուրբ Հաղորդութիւնը միշտ դէպի դուրս կ'առաջնորդէ: Քրիստոս մեզ կը հաւաքէ, որպէսզի մեզ ուղարկէ: Ան մեզի հետ կը քալէ, որպէսզի մենք օգնենք ուրիշներուն բացայայտելու Իր ներկայութիւնը:

Մինչ կը պատրաստուինք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին, եւ կը շարունակենք մեր ուխտագնացութիւնը դէպի 2028-ի Միջազգային Հաղորդութեան Համագումար, կը հրաւիրուինք նորոգելու մեր յանձնառութիւնը՝ ապրելու որպէս առաքելական աշակերտներ, եւ ուրախութեամբ վկայելու Քրիստոսի մասին՝ ուր որ Ան մեզ ուղարկէ:

Անձնական Խորհրդածութեան Հարցումներ

Որոշ ժամանակ տրամադրեցէք լռութեան մէջ խորհրդածելու հետևեալներուն շուրջ.

1 - Այս ճամբորդութեան ընթացքին, ինչպէ՞ս աճեցաւ իմ ըմբռնումս Սուրբ Հաղորդութեան մասին:

.....

.....

.....

.....

2 - Ի՞նչ միջոցներով Քրիստոս զիս կը հրաւիրէ աւելի խոր աշակերտութեան:

.....

.....

.....

.....

3 - Ի՞նչ առիթներ ունիմ իմ հաւատքիս մասին վկայելու առօրեայ կեանքիս մէջ:

4 - Որո՞նք կրնայ Աստուած ինձ կոչել՝ հրաւիրելու, քաջալերելու կամ ընկերակցելու հաւատքի մէջ:

Խմբային Քննարկման Հարցումներ

Բաժնեկցեցե՛ք ձեր խումբի անդամներուն հետ

1 - Նախորդ բաժիններուն անդրադառնալով, ի՞նչ բաժինը ամենէն խոր ազդեցութիւն ձգեց ձեր վրայ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

2 - Ի՞նչ կը նշանակէ այսօր՝ Սուրբ Հաղորդութեան վկայ ըլլալ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

3 - Ինչո՞ւ հաւատքի հրապարակային արտայայտութիւնները կարեւոր են:

4 - Ինչպէ՞ս կրնայ մեր ժողովրդապետութիւնը շարունակել
վերանորոգութեան այս ճամբորդութիւնը «Քալել Քրիստոսի Հետ»
թափօրէն անդին:

Գործնական Գործողություն՝ Այս Բաժնին Համար

Ընտրեցեք հետևեալներէն մէկը կամ աւելին.

- Ընտանիքի անդամ մը, բարեկամ մը, դրացի մը, կամ հաւատարէն հեռացած Կաթողիկէ անձ մը հրաւիրեցեք ձեզի միանալու «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին:
- Մէկու մը հետ բաժնեկցեցեք, թէ այս ճամբորդութիւնը ինչպէս զօրացուց ձեր հաւատքը:
- Ամէն օր աղօթեցեք անոնց համար որոնք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրի ընթացքին պիտի հանդիպին Եկեղեցւոյ վկայութեան:
- Մասնակցեցեք ժողովրդապետական Սուրբ Ժամու մը, կամ Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան:
- Յանձն առէք գործնական միջոց մը՝ շարունակելու ձեր Սուրբ Հաղորդութեան վերանորոգութիւնը թափօրէն անդին:

Փականան Աղօթք

Տէր Յիսուս,
Շնորհակալ ենք քեզի, որ այս ամբողջ ճամբորդութեան ընթացքին մեզի
հետ քալեցիր:

Դուն մեզ սնուցիր Քու Մարմինովդ եւ Արիւնովդ, զօրացուցիր մեզ Քու
Խօսքովդ եւ վերանորոգեցիր մեզ հաւատքով, յոյսով, եւ սիրով:

Մինչ կը պատրաստուինք «Քալել Քրիստոսի Հետ» Թափօրին,
օգնէ մեզի համարձակօրէն եւ ուրախութեամբ վկայել Քու ներկայութիւնդ:


Թող մեր կեանքերը արտացոլան Քու գթութիւնդ, մեր խօսքերը
յայտարարեն Քու ճշմարտութիւնդ, եւ մեր գործերը բացայայտեն Քու սէրդ:

Մեզ առաքէ որպէս առաքելական աշակերտներ, պատրաստ ծառայելու
Քու Եկեղեցիիդ եւ յայտարարելու Քու Աւետարանդ:

Թող մեր պատրաստութիւնը «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին, մեզ աւելի
խոր առաջնորդէ Սուրբ Հաղորդութեան Խորհուրդին մէջ, եւ պատրաստէ
մեր սրտերը ընդունելու Տիեզերական Եկեղեցին՝ 2028-ի Միջազգային
Սուրբ Հաղորդութեան Համագումարին:

Մարիամ, Հաղորդութեան Կին,
Աղօթ'է մեզի համար:

Ամէն:



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹԸ

Մինչ կ'աւարտենք Սուրբ Հաղորդութեան վերանորոգութեան այս ճամբորդութիւնը, այժմ կը մտնենք «Քալել Քրիստոսի Հետ» թափօրի պատրաստութեան վերջին շաբաթը: Անցած ամիսներուն ընթացքին խորհրդածեցինք Սուրբ Հաղորդութեան մէջ Քրիստոսի ներկայութեան մասին, աւելի խորապէս մուտք գործեցինք Սուրբ Պատարագի Խորհուրդին մէջ, անեցանք Եկեղեցւոյ հետ հաղորդակցութեան մէջ, զօրացուցինք մեր աղօթքի կեանքը եւ նորոգեցինք մեր յանձնառութիւնը առաքելութեան ու վկայութեան նկատմամբ:

Այս վերջին շաբաթը առիթ մըն է գործադրելու այն բոլորը, զորս ստացանք՝ աղօթքի, հաշտութեան, Սուրբ Հաղորդութեան Երկրպագութեան եւ հոգեւոր պատրաստութեան միջոցաւ:

Մինչ կը պատրաստուիք մասնակցելու «Քալել Քրիստոսի Հետ» թափօրին՝ 22 Նոյեմբեր 2026-ին, կը քաջալերենք ձեզ վերանայելու այս ուղեցոյցին սկիզբը ներկայացուած «Պատրաստութեան Ցանկ»-ը: Հոն նշուած գործնական, հոգեւոր եւ առաքելական քայլերը կրնան օգնել, որպէսզի անհատներ, ընտանիքներ, ծառայութիւններ, դպրոցներ եւ ծուխեր լիարժէք կերպով պատրաստ ըլլան մասնակցելու հաւատքի այս ուրախ եւ հրապարակային վկայութեան:

Թող այս վերջին շաբաթը շնորհքի ժամանակ մը ըլլայ, մեզ աւելի մօտեցնելով Քրիստոսի՝ Սուրբ Հաղորդութեան մէջ, եւ պատրաստելով մեր սիրտերը Անոր հետ քալելու հաւատքով, յոյսով եւ սիրով:



ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Այս Ուղեցույցը պատրաստուած է Սիտնիի Աւետարանչութեան Կեդրոնին կողմէ՝ օգտուելով 2028-ի Միջազգային Հաղորդութեան Համագումարին համար մշակուած նիւթերէն, եւ յարմարեցուած է Սիտնիի Կաթողիկէ Արքեպիսկոպոսութեան գործածութեան համար:

Արքեպիսկոպոսութիւնը խորին երախտագիտութեամբ կը գնահատէ բոլոր անոնց ներդրումը, որոնց գիտական աշխատանքը, խորաթափանց տեսլականը, եւ հովուական փորձառութիւնը նպաստած են այս նիւթերու կազմութեան՝ ի սպաս ծխական նորոգութեան եւ Հաղորդութեան կազմաւորման: Յատկապէս մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Պրոֆ. Թրէյսի Ռոուլընտին, Տքթ. Ռընէ Քէօլըր-Ռայընին, Տքթ. Մարիուշ Պիլինեւիչին, Հոգշ. Պրոֆ. Ճերարտ Քելլիին եւ Արքեպիսկոպոս Թիմըթի Քոսթըլլոյ SDB-ին՝ այս աշխատանքին իրենց առատաձեռն ներդրումին համար:

2028-ի Միջազգային Հաղորդութեան Համագումարին վերաբերող լրացուցիչ տեսանիւթեր, վկայութիւններ, յօդուածներ, աղօթքներ եւ ծխական աղբիւրներ գտնելու համար այցելեցէք հետեւեալ կայքը.
eucharist28.org

Սիտնիի Կաթողիկէ Արքեպիսկոպոսութիւն

Սիտնիի Աւետարանչութեան Կեդրոն

Sydney Centre for Evangelisation

38 Renwick Street

Leichhardt NSW 2040 Australia

Այս թարգմանութիւնը պատրաստուած է
Գերպ. Բարսեղ Թ.Ճ.Վ. Սուսանեանի կողմէ



THE 54TH INTERNATIONAL
EUCCHARISTIC
CONGRESS 2028
SYDNEY, AUSTRALIA